ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կիպրոսի Հանրապետություն գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Մերի Գասպարյան
   Արևիկ Ստեփանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության երեխաների հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Կիպրոսի Հանրապետություն, 2023 թվականի դեկտեմբերի 7-ից 19-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Կիպրոսի Հանրապետության կրթության, սպորտի, երիտասարդության նախարարություն,
   Կիպրոսի Հանրապետության հայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգես Մահտեսյան

5. **Գործուղման նպատակը.**
   Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 30 երեխաներին Կիպրոսի Հանրապետությունում կազմակերպված սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծրագրի շրջանակում ուղեկցելու նպատակով

6. **Քննարկված թեմաները.**
   Սոցիալ-վերականգնողական ծրագրի շրջանակում քննարկվել են Կիպրոսի Հանրապետության մշակույթի, պատմության, կառավարման, կրթական համակարգի վերաբերյալ թեմաներ:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Կիպրոսի Հանրապետություն կազմակերպված այցելության շրջանակներում տեղի ունեցավ հանդիպում Նիկոսիայի քաղաքապետ Կոնստանտինոս Գեորգաջիսի հետ, ով ներկայացրեց Նիկոսիայի մասին տեղեկատվություն, պատասխանեց երեխաների հարցադրումներին:

Կիպրոսի Հանրապետության կրթության, սպորտի, երիտասարդության նախարարություն այցի ընթացքում երեխաները Նիկոսիայի Նարեկ հայկական վարժարանի 20 երեխաների հետ մասնակցեցին ամանորյա ցերեկույթին՝ հանդես գալով վարժարանի երեխաների հետ համատեղ երգերով:

Կիպրոսի Հանրապետության պառլամենտում տեղի ունեցավ հանդիպում Ներկայացուցիչների պալատի անդամ և կրթության և մշակույթի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Պավլոս Միլոնայի հետ:

Տեղի է ունեցել հանդիպում Տ. Խորեն Արքեպիսկոպոս Տողրամաճեանի հետ, Նիկոսիայի Ս. Աստվածածին Մայր եկեղեցում երեխաները ներկա են գտվել պատարագի:

Բոլոր պաշտոնական հանդիպումներին ներկա է գտնվել և խմբին ուղեկցել է Կիպրոսի հայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգես Մահտեսյանը:

Խմբին կցված են եղել և մշտապես ուղեկցել են նաև հայ համայնքի երեք պատասխանատու ներկայացուցիչներ, ովքեր անմիջականորեն իրագործել են նախապես մեծ խնամքով կազմված բովանդակալից ծրագիրը:

Այցելություններ են կազմակերպվել նաև Լառնակայի Սուրբ Ղազարոս եկեղեցի, Ս. Ստեփանոս հայ առաքելական եկեղեցի, տեղի է ունեցել շրջայց Կիպրոսի Հանրապետության Լառնակայի շրջանի հյուսիս-արևմուտքում գտնվող Լեֆկարա գյուղ, Այա Նապա, կազմակերպվել էր զբոսանավով նավարկություն, ճաշ նավի վրա, աճպարարի կողմից շոու: Կազմակերպվել է այցելություն նաև Կիպրոսի հնագիտական թանգարան, Տամասու և Օրինիսի շրջանի առաջնորդարան, որտեղ տեղի է ունեցել հանդիպում հոգևոր առաջնորդի հետ:

Այցելություններ են եղել Լառնակայի, Նիկոսիայի, Լիմասոլի Նարեկ հայկական վարժարաններ, որտեղ երեխաները շատ ջերմ ընդունելության են արժանացել, ստացել են նվերներ:

Երեխաների համար կազմակերպվել էին նաև այցելություններ տարաբնույթ ժամանցային վայրեր (ատրակցիոններ, բոուլինգ, պլանետարիում, սառցե դարաշրջանի ցուցահանդես, պարադոքս թանգարան, փեյնթբոլ ժամանցի կենտրոն, ֆիլմի դիտում և այլն): Պատմամշակութային վայրեր այցերն ուղեկցվել են ռուսալեզու զբոսավարի բացատրություններով, մեկնաբանություններով:

Կիպրոսի Հանրապետություն այցի շրջանակներում երեխաները առանձնահատուկ մեծ ուշադրության ու ջերմության են արժանացել Կիպրոսի հայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգես Մահտեսյանի կողմից՝ ստանալով բազմաթիվ նվերներ, այդ թվում՝ մեծ ճամպրուկներ, բաճկոններ, հագուստներ և այլ անհրաժեշտ իրեր:

Կարմիր խաչի միջազգային կազմակերպության և Կիպրոսի հանրապետության պառլամենտի կողմից երեխաներին հատկացված վաուչերներով երեխաների համար կատարվել են անհրաժեշտ գնումներ (ըստ նախասիրության՝ սպորտային, ձմեռային կոշիկներ, հագուստ):

Այցի օրակարգը կցվում է:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
Որոշումներ չեն ընդունվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**
Հաշվի առնելով, որ նմանատիպ ծրագրերը Լեռնային Ղարաբաղի հակամարտությունից տուժած երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնման տեսանկյունից մեծ կարևորություն ունեն՝ առաջարկում ենք դիտարկել սփյուռքի այլ հայկական համայնքների ներգրավմամբ ևս նման ծրագրեր իրականացնելու հնարավորությունը:

Միաժամանակ, նման այցերը հնարավորություն են տալիս նաև բարձրացնել Հայաստանի տեսանելիությունը և երեխաների միջոցով ուշադրություն հրավիրել առկա հիմնախնդրի վրա:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Մ. Գասպարյան 26.12.2023

Ա. Ստեփանյան 26.12.2023